Կրթական ծրագիրը՝ ուսումնական օրացույցով, ուսումնական նախագծերով, անհատական թվային միջոցներով

Երաժշտություն

2018-2019 ուսումնական տարի

Դասընթացի, ակումբի ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր) շարունակում -լրացնում է նախորդ ուսումնական տարվա ծրագիրը:

1 – 3-րդ, 4 – 5-րդ դասարաններ
6 – 9 -րդ դասարաններ
10 – 11-րդ դասարաններ
Քոլեջ, 1-ին կուրս հիմնական կրթության հիմքով

Ծրագրի բովանակությունը

1. **Ծրագրի իրականացման ժամաքանակը.**

Շաբաթական. 1-3-րդ դասարաններ՝ որից մեկը դասավանդում է դասվարը, իսկ մյուսը՝ առարկայական դասավանդողը. 4- 5-րդ դասարաններ՝ 2 դասաժամ, 6 – 11-րդ դասարաններ՝ 1 դասաժամ:

2. **Անհատական ուսուցման միջավայրը**

- **Դասավանդողի ուսումնական բլոգին, դրա վարմանը ներկայացվող պահանջներ**

Երաժշտության դասընթացը դասավանդողի ուսումնական բլոգը պետք է ունենա հետևյալ բաժինները.

https://marinemkrtchyan.wordpress.com/ - տես՝ «Բաժիններ» բաժինը

- Ազգային ծեսեր
- Անհատական աշխատաժամանակ
- Անհատական պլան
- Առցանց ուսուցում
- 5 (6) տարեկաններ

- «Սեբաստացիներ» մանկական երգչախումբ
- «Սեբաստացիներ» ուսուցչական երգչախումբ
- «Սեբաստացիներ» վոկալ համույթ
- «Բարեկամություն» ճամբար
- Բարձունքի հաղթահարում
- Գիտագործնական հավաք
- «Դպիր» մանկավարժական հանդես , Հոդվածներ
- Դասավանդողների շուրջտարյա դպրոց
- Դաստիարակների երաժշտական լաբորատորիա
- Դիպլոմային նախագիծ
- Դիջիթեք
- Երաժշտական գրականություն
- Երաժշտության ընտրությամբ գործունեություն
- Իմ մասին
- Ծրագրային երգեր
- Ծրագրեր
- Ծրագրերի իրականացում
- Կատարումներ
- Կոմիտաս
- Կրթական ծրագրերի տարածում
- Կրթական փոխանակումների նախագծեր
- Կրթամշակութային արշավ
- Հայկական ավանդական խաղեր
- Հայտարարություն
- Հայրենագիտություն
- Հաշվետվություններ
- Հավաքից հավաք
- Հեղինակային կրթական ծրագրեր
- Հետազոտական աշխատանք
- Հետաքրքիր լուրեր, նորություններ
- Զայնադարան
- Մանկավարժական աշխատողների ճամբար
- Մասնագիտական զարգացում կամ ինքնակրթություն
- Մեդիաուրբաթ
- Նախագծային աշխատանք
- Նախագծեր
- Նախակրթարան

- Նկարաշար
- Շրջակա միջավայր
- Ունկնդրման նյութեր
- Ուսճամփորդություն
- Ուսումնական նյութեր
- Ուսումնական փաթեթ
- Ուսումնական ֆիլմեր
- Ուսճամփորդություն
- Պար
- Սեբաստացու օրեր
- Սովորողների ճամբար
- Ստուգատես, փառատոն
- Վերապատրաստում
- Տեղեկատվություն
- Տեսադաս
- Տնօրենի օրագիր
- Օրագիր
- Ֆիլմեր

Բաժինները համալրվում են համապատասխան նյութերով՝ տարվա ընթացքում: Այլ հեղինակներից օգտվելիս՝ պահպանվում են հեղինակային իրավունքի նորմերը, էթիկայի կանոնները: Բլոգի հղումը դրվում է կայքում (ենթակայքում), որից կարող են օգտվել սովորողները, ծնողները, դասավանդողները և այլոք: Ուսումնական բլոգը չի կարող ծառայել որպես անձնական տարածք:
Եթե երաժշտության դասավանդողն ունի երգչախումբ, վոկալ կամ հարվածային, շրխկան նվագարանների խումբ, նվագախումբ, ապա բլոգում պետք է ունենա համապատասխան բաժին, ինչպես նաև կարող է ստեղծել խմբի նոր բլոգ:

- Սովորողի ուսումնական բլոգի առարկայական բաժնին ներկայացվող պահանջներ

Սովորողի ուսումնական բլոգը պետք է ունենա երաժշտության առարկայի բաժին՝ իր ենթաբաժիններով, որտեղ կարող է տեղադրել ինչպես իր պատրաստած ուսումնական նյութերը, այնպես էլ այլ ծրագրային ուսումնական նյութեր՝ պահպանելով հեղինակային իրավունքի նորմերը, էթիկայի կանոնները: Այն ունենում է համապատասխան բաժիններ, որոնք տարվա ընթացքում անընդհատ համալրվում են նյութերով:

Բլոգում անպայման պետք է լինի «Մշակութային վերածնունդ» կայքի, Գրադարանի հղումը, որտեղ կա Ձայնադարան բաժինը՝ համապատասխան այլ բլոգների հղումներով:

- Ուսուցչին անհրաժեշտ գործիքներ և նյութեր

Երաժշտության դասընթացը կազմակերպվում է առարկայի առանձնահատկություններին համապատասխանող, պահանջները բավարարող ուսումնական միջավայրում՝ համապատասխան կահավորմամբ, ՏՀՏ միջոցներով, մասնագիտական գրականությամբ (գրքեր, նոտաներ).

- համակարգիչ՝ անլար ինտերնետ կապով, որը կունենա համակարգչային այն ծրագրերը, այդ թվում՝ նաև երաժշտական, որոնք անհրաժեշտ են դասապրոցեսն իրականացնելիս,
- ուժեղացուցիչ , որը պետք է ապահովի մաքուր և համապատասխան ուժգնության հնչողություն,
- էլեկտրոնային գրատախտակ. Smart-Notebook ծրագրով աշխատելու համար (հատկապես նոտագրագիտության ուսուցման համար),
- դաշնամուր, որը պետք է լինի լարված, աշխատունակ (անթույլատրելի է լարվածքից ընկած, որոշ ստեղների անաշխատունակ վիճակը), շրխկան, հարվածային, երաժշտական նվագարաններ,
- մասնագիտական գրականություն՝ նոտաներ,
- անհրաժեշտ գույք՝ աթոռներ և սեղաններ, պահարան՝ երաժշտական նվագարանների, մասնագիտական գրականության համար:

Սովորողին անհրաժեշտ գործիքներ և նյութեր

- ✓ անհատական համակարգիչ (նոթբուք/ նեթբուք)՝ անհրաժեշտ ծրագրերով,
- ✓ ձայնագրիչ (թվային, հեռախոս), ֆոտո-տեսախցիկ,
- ✓ ուսումնական նյութեր (դասագիրք, ձեռնարկ, էլեկտրոնային ռեսուրս և այլն):

2. Ուսումնական մեդիագրադարան

- դասագիրք, ձեռնարկ

- ✓ Մեդիագրադարան
- ✓ Մեդիագրադարան, Ձայնադարան
- ✓ Ա. Շահնազարյան, «Կաբավիկ»

- ✓ Լ. Կարապետյան, «Երգարան»
- ✓ Ա. Շահնազարյան, «Երգ ու բան», «Երգ ու հաց»

- էլեկտրոնային ռեսուրսներ

  - ✓ Համացանց

    - www.google.am ,
    - Muzurok
    - նոտաներ երեխաների համար
    - և այլն

- ուսումնական նյութեր
  - ✓ դասավանդողի բլոգ (երաժշտության դասավանդողների բլոգների հղումները կան Զայնադարանում)՝ «Զայնադարան», «Երաժշտական գրականություն» , «Ուսումնական նյութեր» , «Ունկնդրման նյութեր» բաժիններով,
  - ✓ մեդիաձայնադարան
  - ✓ մեդիագրադարան

3. Ծրագրի ուսումնական օրացույցը. օրացույցի, նրա առանձին մասերի կազմակերպման մեթոդական նկարագրություն

Կրթահամալիրն ունի տարվա ուսումնական օրացույց, որով պարտադիր աշխատում են բոլորը: Դրանից բացի գործում է նաև առարկայական օրացույց, որը կազմում է տվյալ առարկան դասավանդողը՝ հաշվի առնելով կրթահամալիրի օրացույցի ծանրաբեռնվածությունը:

Երաժշտական առարկայական նախագծերը կրթահամալիրի ուսումնական օրացույցով.

- ✓ առավոտյան ընդհանուր պարապմունք
- ✓ մեդիաուրբաթը՝ համերգ
- ✓ երաժշտության ունկնդրում
- ✓ Կոմիտաս
- ✓ հակաբացիլ-անտիվիրուս Կոմիտաս
- ✓ համերգների կազմակերպում
- ✓ հեղինակային կրթական ծրագրերի ամենամյա ստեղծագործական հավաքներ (գարնանային, աշնանային)

- ✓ Մխիթար Սեբաստացու օրեր. Կրթահամալիրի տոնը
- ✓ ամենամյա հաշվետու համերգ երևանյան, այլ համերգասրահներում՝ դեկտեմբերին և մայիսին
- ✓ Սուրբ ծնունդ
- ✓ երաժշտական խաղեր
- ✓ ուրախ օտար լեզու. ուսումնական կարառկե

Կրթահամալիրում իրականացվող երաժշտական և երաժշտության ներգրավմամբ իրագործվող նախագծեր

Ուսումնական օրացույց

Նախագիծ

Ամենօրյա ընդհանուր պարապմունք կրթահամալիրի դպրոցներում, քոլեջում

Երկուշաբթի

- 2-4 տարեկանների դաստիարակների լաբորատորիա՝ 14.00
- «Սեբաստացիներ» ուսուցչական երգչախմբի պարապմունք՝ 15:15
- «Սեբաստացիներ» մանկական երգչախմբի պարապմունք՝ 15:30
- «Սեբաստիո» համույթի պարապմունք՝ 16:30

Երեքշաբթի

- «Սեբաստացի խազեր» պատանեկան երկսեռ երգչախմբի պարապմունք
- Գրական ակումբ՝ 14:30
- «Սեբաստացիներ» վոկալ խմբի պարապմունք՝ 14:30
- Վարչական խորհդի նիստ՝ 15:30 (1-ին, 3-րդ, 5-րդ երեքշաբթի)
- Մասնաժողով՝ 15:30 (4-րդ երեքշաբթի)
- Մանկավարժական ակումբի պարապմունք՝ 15:30 (2-րդ երեքշաբթի)

Չորեքշաբթի

- Երկարացված օրվա կազմակերպիչների՝ 12:00
- «Սեբաստացիներ» վոկալ խմբի պարապմունք՝ 14:30
- Մանկավարժական աշխատողների շուրջտարյա դպրոց՝ 15:15
  մանկավարժական խորհուրդների պարապմունք
  մասնախմբերի պարապմունք

համերգ
ընդհանուր պարապմունք-աշխատողների ժողով

Հինգշաբթի

- «Իմացումի հրճվանք» ծրագրի կրտսերների ամսիկներ
- 2-4 տարեկանների դաստիարակների լաբորատորիա՝ 14.00
- «Սեբաստացի խազեր» պատանեկան երկսեռ երգչախմբի պարապմունք
- «Սեբաստացիներ» ուսուցչական երգչախմբի պարապմունք՝ 15:15
- «Սեբաստացիներ» մանկական երգչախմբի պարապմունք՝ 15:30
- «Սեբաստիո» համույթի պարապմունք՝ 16:30

Ուրբաթ

- առավոտյան ժամերգություն Սուրբ Երրորդություն եկեղեցում՝ 9:00
- համերգ-պարապմունք՝ 15:15

Ամենամսյա՝
- առարկայական ֆլեշմոբներ
- վերապատրաստումների բաց լաբորատորիա.
  Մուտք կրթահամալիր, առաջին քայլ. «Բլոգային-նախագծային ուսուցում» ամենամսյա քառօրյա վերապատրաստում. սկիզբը՝ յուրաքանչյուր ամսվա երրորդ երեքշաբթի օրը
  «Բլեյան» ցանցի նախադպրոցական հաստատության աշխատողների ամենամսյա հնգօրյա վերապատրաստում. յուրաքանչյուր ամսվա երրորդ շաբաթը. սկիզբը՝ երկուշաբթի օրը
  «Բլեյան» ցանցի դասվարների եռօյա վերապատրաստումներ. յուրաքանչյուր ամսվա առաջին շաբաթը, սկիզբը՝ չորեքշաբթի օրը
  «Բլեյան» ցանցի երաժշտության ուսուցիչների-դաստիարակների, տեխնոլոգիայի-կերպարվեստի, տեխնոլոգիայի ուսուցիչների, կազմակերպիչների եռօյա վերապատրաստումներ. յուրաքանչյուր ամսվա երկրորդ շաբաթը, սկիզբը՝ չորեքշաբթի օրը
- ամենշաբաթյա հանդիպումներ Գեղարվեստի հարթակում

Շուրջտարյա նախագծեր՝
- Դպրոց բնության գրկում. հայրենագիտական-բնապահպանական-արշավախմբային ճամբար Արատեսում
- Ուսումնական Գյումրի

- Ուսումնական Արագածոտն
- Ուսումնական Վայոց ձոր
- Հայ-վրացական հանրակրթական կամուրջներ
- Գետը համայնքում
- Երգ երգոց
- Կրթական փոխանակումներ հայաստանյան մարզերում, Արցախում. հանրակրթական նոր կամուրջներ՝ Երևան-Սհամբուլ, հայ-ֆրանսիական
- Ուսումնական-հայրենագիտական ճամփորդություններ
- Հոգևոր Հայաստան
- Ուսումնական պատարագ
- Հարսանյաց ծես

Օգոստոսի 13՝ դպրոցների, ուսումնական կենտրոնների, գրասենյակների ղեկավարների համար ուսումնական տարվա սկիզբը

Օգոստոսի 21՝ մանկավարժական աշխատողների համար ուսումնական տարվա սկիզբը

Օգոստոսի 21-29՝ մանկավարժական աշխատողների օգոստոսյան ճամբար

Օգոստոսի 30՝ հեղինակային կրթական ծրագրերի ուսումնական տարվա մեկնարկ

Սեպտեմբերի 3՝ ուսումնական 1-ին շրջանի պարապմունքների մեկնարկ կրթահամալիրի դպրոցներում, Քոլեջում

Սեպտեմբեր-հոկտեմբեր՝

- «Լողափնյա աշուն» նախագիծ դպրոց-պարտեզներում
- «Երևան 2800»
- Ապրել միասին. Երևանը ֆրանկաֆոնիայի մայրաքաղաք
- Դպրոց բնության գրկում. հայրենագիտական-բնապահպանական-արշավախմբային ուսումնական ճամբարներ
  Արատեսի դպրական կենտրոնում,
  Սևանի «Ժայռ»-ում
- Հայրենագիտական-արշավախմբային մեկօրյա, բազմօրյա ճամփորդություններ. «Անկախության տոն. բարձունքների նվաճում» նախագծեր

Սեպտեմբերի 4՝ կրթական շքերթ. համերգ

Սեպտեմբերի 3-7՝ նախագծային ուսուցման ստուգատես. հեղինակային կրթական ծրագրի բաց ցանցի սեպտեմբերյան ամենամյա ստեղծագործական հավաք. շուրջտարյա, ուսումնական առաջին շրջանի նախագծերի ներկայացում և մեկնարկ «Երևան-Ստամբուլ» ճամբար Երևանում

Սեպտեմբերի 7-9՝ Արատեսի դպրական կենտրոնում Դպրոց բնության գրկում» շուրջտարյա ճամբարի մեկնարկ

Սեպտեմբերի 24-հոկտեմբերի՝ Կոմիտասյան օրեր

Հոկտեմբերի 5-7՝ «Դիջիթեք էքսպոն՝ ուսումնական տաղավար»
Հոկտեմբերի 5՝ ուսուցչի օր. համերգ-ներկայացում
Հոկտեմբերի 6՝ ուսուցչի տոնից բարձունք
Հոկտեմբերի 8-19՝

- գրաբարի օրեր. թարգմանչաց տոն
- «Վահան Ասատրյան» հուշամրցաշար. ռազմամարզական խաղեր
- Սեբաստացիների օրեր Գյումրիում
- Երևան-Ստամբուլ հանրակրթական կամուրջներ. կրթահամալիրի մանկավարժական աշխատողների գործուղում Ստամբուլ

Հոկտեմբերի 22-26՝

- նախագծային ուսուցման ստուգատես. Սեբաստացու օրեր գործընկեր (ցանցի) հաստատություններում, Ստամբուլում
- ազգագրական աշնանային փառատոն
- Հայ-ֆրանսիական ճամբար Երևանում

Հոկտեմբերի 29-նոյեմբերի 3՝

- «Ուսումնական աշուն» նախագիծ
- պատանեկան ուսումնական ճամբարներ
- մանկավարժական նորարարության աշնանային բաց ճամբար
- 2019թ. «Մուտք կրթահամալիր» ճամբարներ

Նոյեմբերի 5-9՝ նախագծային ուսուցման ստուգատես. Սեբաստացու օրեր. կրթահամալիրի տոնը կրթահամալիրում

Դեկտեմբերի 3-28՝

- «Լույսեր, գույներ, ղողանջներ, մեղեդիներ, ազդեցություններ». ելքի ու մուտքի ստուգատես. ամանորի տոնախմբություններ
- ամենամյա հաշվետու համերգ. Գեղարվեստը կրթահամալիրում

Դեկտեմբերի 31 - 2019թ. հունվարի 7՝ «Ուսումնական ձմեռ» նախագիծ
Հունվարի 5-6՝ Սուրբ Ծնունդ
Հունվարի 8՝ ուսումնական երկրորդ շրջանի մեկնարկ
Հունվարի 8-25՝ նախագծային ուսուցման ուսումնական ճամբարներ կրթահամալիրի դպրոցներում. ամենամյա բաց հանրակրթական ստուգատեսներ.

- Հանրակրթական Դիջիթեք 2018. թվային ուսուցման միջոցներով ուսուցման նախագծերի և մեթոդների
- բնագիտության և տեխնիկական ստեղծագործության նախագծերի

- մարմնամարզական նախագծերի
- ձմեռային մարզական խաղերի
- ազգագրական ձմեռային փառատոն

Հունվարի 26՝ ստուգատեսային տոն - դափամա

Հունվարի 27-28՝ ձմեռային մարզական խաղեր, ճամփորդություններ՝ նվիրված ՀՀ բանակի օրվան

Հունվարի 29՝ ուսումնական երրորդ շրջանի մեկնարկ

Հունվար-փետրվար՝ հանրապետական առարկայական օլիմպիադաների դպրոցական, տարածքային փուլեր

Փետրվարի 4-մարտի 15՝ «Կարդում ենք Տերյան, Թումանյան, Չարենց» ստուգատես. ընթերցողի, ընթերցանության, ընթերցարանի ստուգատես

Փետրվարի 7՝ Մխիթար Սեբաստացու ծննդյան օրը

Փետրվարի 18 - մարտի 15՝ մայրենիի ստուգատես

Փետրվարի 19՝ Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակը

Մարտի 5-ապրիլի 5՝

«Զոն». տեխնոլոգիական նախագծերի ստուգատես

հասարակագիտական նախագծերի ստուգատես

Մարտի 14՝ Ալբերտ Էյնշտեյնի ծննդյան 140-ամյակը

Մարտի 18՝ Տիգրան Հայրապետյանի օր

Մարտի 25-30՝

- «Ուսումնական գարուն» նախագծեր
- պատանեկան ուսումնական բաց ճամբարներ
- մանկավարժական նորարարության գարնանային բաց ճամբար
- ազգագրական գարնանային փառատոն

Ապրիլի 1-5՝ նախագծերով ուսուցման ստուգատես. ռազմամարզական խաղերի գարնանային հանրակարթական բաց ստուգատես

Ապրիլի 6՝ Լևոն Շանթի 150-ամյակը

Ապրիլի 8-14՝ վրացերենի օրեր կրթահամալիրում. «Հանրակրթական կամուրջներ» նախագծերի ստուգատես

Ապրիլի 21՝ Սուրբ Հարության տոն

Ապրիլի 22-26՝ Հանրակրթական էկոտուր, հայրենագիտական-էկոլոգիական նախագծերի ստուգատեսի մեկնարկ

Ապրիլի 24-մայիսի 31՝ կենսամշակութային արշավներ, բարձունքների նվաճում. Հանրապետության օրեր

Մայիսի 13-17՝ հեղինակային կրթական ծրագրերի ամենամյա մայիսյան հավաք

Մայիսի 13-24՝ շրջանավարտների «Ցտեսություն» ուսումնական-տոնական նախագիծ

Մայիսի 27-28 - Հանրապետության օրեր

Մայիսի 29-հունիսի 14 - նախագծային ուսուցման ուսումնական ճամբարներ կրթահամալիրի դպրոցներում. ամենամյա բաց հանրակրթական ստուգատես-փառատոներ.

- «Պաշտպանված երեխա» ստուգատես
- Հակաբացիկ Կոմիտաս
- Շրջակա միջավայրի օր. շրջակա միջավայրի բարելավման նախագծեր. Հանրակրթական էկոտուր ստուգատեսի ամփոփում
- Ռազմա-մարզական ստուգատես
- Ուսումնական-հայրենագիտական ճամփորդությունների ստուգատես
- Ընտրությամբ գործունեության նախագծերի ստուգատես
- Թարգմանական ստուգատես
- Թատերական փառատոն
- Կինոֆոտոփառատոն
- Երաժշտական փառատոն. «Գեղարվեստը կրթահամալիրում». ամենամյա հաշվետու համերգներ

Հունիսի 17-28՝

- մանկավարժական աշխատողների հունիսյան բաց ճամբար
- մանկավարժական նորարարության հունիսյան բաց ճամբար
- ջավախքյան, արցախյան պլեներներ
- ազգագրական բաց ճամբար

Հունիսի 17-հուլիսի 9՝ միջին մասնագիտական, նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության ծրագրի շրջանավարտների դիպլոմային նախագծերի պաշտպանություն

Հունիսի 1- օգոստոսի 31՝ ամառային լողափնյա դպրոցի, ամառային լողափնյա պարտեզների գործունեություն

- մանկական լողափնյա ճամբարներ 6-10 տարեկանների համար
- դեռահասերի, պատանիների ճամբարներ
- «Մուտք կրթահամալիր» ճամբարներ
- պատանեկան աշխատանքի ճամբարներ
- Սևանի «Ժայռ»-ում ընթերցողական-հայրենագիտական-բնապահպանական-ռազմամարզական բաց ճամբար
- արշավախմբային դաշտային բացօթյա մոբիլ դպրոց (դաշտային ճամբարներ)
- Արատեսի ռազմամարզական ճամբար
- մասնակցություն Արցախի «Ասպետ» ճամբարին՝ հուլիսի 9-19

- մասնակցություն Իզմիրի տիեզերագիտական ճամբարին
- մասնակցություն վրաստանյան միջազգային ճամբարների
- մասնակցություն բաց (միջազգային) այլ ճամբարների, հավաքների

Հուլիսի 27 - «Բրոյի-բրոյի. Սեյրան Ավագյանի հետ»

Կրթահամալիրի ուսումնական օրացույցի հավելվածներ են.
- դպրոցների, ուսումնական կենտրոնների օրացույցները,
- ամենամյա բաց ստուգատեսների օրացույցները,
- ամսվա, օրական օրացույցները:

4. Ծրագրի բաղկացուցիչ ուսումնական մոդուլները՝ իրենց ժամաքանակով, ուսումնական նախագծերով, ուսումնական ճամփորդություններով, ակնկալվող արդյունքներով

Ծրագրի բաղկացուցիչ ուսումնական գործընթաց է ազգային ծեսերի իրականացումը: Ներկայացվում է

- ✓ ծեսերի ինտեգրման կարևորությունն ու անհրաժեշտությունը,
- ✓ արդեն իրականացված ծիսական ուսումնական նախագծերը՝ ուսումնական ճամփորդություններով, գործընթացով, արդյունքներով:

Ծեսերի, ծիսական գործողությունների իրականացում

Հանրակրթական դպրոցում երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ավանդույթներ, ծեսեր, տոներ: Բնականոն կյանքով ապրելու պայմաններում ժողովրդական տոները կզարգանային, կփոխվեին հասարակական փոփոխությունների հետ համաքայլ: Դրանք չէին իմաստազրկվի, այլ նոր որակ, նոր ձև կստանային և կշարունակեին կատարել իրենց կարևորագույն դերը՝ մարդկանց համախմբելու, ազգային և մարդկային արժեքները պահպանելու:
21–րդ դարի սկզբին հայտնվել ենք մի տխուր փաստի առջև. մենք կորցրել ենք ազգային շատ կարևոր արժեքներ և փորձում ենք վերականգնել կորցրածը: Այս գործը պետք է սկսել վաղ հասակից, այսինքն՝ ծնված օրվանից: Երեխան դաստիարակվում և սովորում է՝ յուրացնելով մեծերի փոխանցած մշակույթը: Եթե ընտանիքում, հասարակության մեջ չի պահպանվել ավանդականը, ապա այդ գործն իր վրա է վերցնում պետությունը կամ կրթօջախը՝ սկսելով նախակրթարանից և շարունակելով մինչև դպրոցն ավարտելը:

Սա «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի զարգացման ծրագրի պահանջներից մեկն է:
Ծեսերին նոր կյանք տալու համար հարկավոր է նախ շատ լավ յուրացնել ավանդականը, ճանաչել այն միջավայրը, որտեղ ստեղծվել են դրանք: Լավ իմանալ երգերն ու պարերը, ծիսական գործողությունները, պարագաները, դրանց խորհուրդն ու պատրաստման տեխնոլոգիան: Ո՞ր գործողություններն են, որ կարելի է կատարել կամ փոքր-ինչ ձևափոխել կամ լրացնել նորով: Ո՞ր պարագաներն են, որոնք շատ լավ կմտնեն ժամանակակից ծեսի մեջ կամ կստանան նոր ձև կամ էլ նորերը կլինեն: Սրանք այն հարցերն են, որոնք առաջ են գալիս և որոնք լուծելու խնդիր ունենք:
Իհարկե, ծեսին նոր կյանք տալ՝ չի նշանակում ակունքից այնքան հեռանալ, որ այն դառնա ոչ թե ծես, այլ անհատ մարդկանց երևակայությամբ ստեղծված հիբրիտ՝ հնի ու նորի վատ սինթեզ: Ծիսական հիմնական կարգը պետք չէ շփոթել տոնական մասի հետ: Յուրաքանչյուր ծես, ծիսական գործողություններից բացի, ունի տոնական մաս, որտեղ կարելի է կատարել ժամանակակից բարձրարժեք երգեր ու պարեր:
Մեր Ծրագրի նպատակն է ծեսը, տոնը սովորողինը դարձնել, որ սովորողը իրեն մասնակից ու փոխանցող զգա:
Խնդրի իրագործման համար մենք առաջարկում ենք.

- ծանոթանալ ազգային ծեսերին ու տոներին,
- ծեսը վերականգնել, նրան նոր կյանք տալ:

Ծեսերը մանրակրկիտ ուսումնասիրելուց հետո՝ որոշում ենք, թե ինչ ճանապարհ են անցնելու սովորողները՝ ծիսակատարությանը նախապատրաստվելիս.

- ✓ ծանոթանում են ծեսի հետ,
- ✓ հավաքում են տեղեկություններ տարբեր աղբյուրներից՝ մեծերից, ինտերնետից, գրքերից և այլն,
- ✓ գրի են առնում
  ա. խաղիկներ,
  բ. առած – ասացվածքներ,
  գ. հանելուկներ,
  դ. հեքիաթներ, պատմություններ, ավանդություններ,
  ե. երգեր:
- ✓ նկարում են
  ա. ծիսական հերոսներին,
  բ. ծիսական պատկերներ,
- ✓ սովորում են
  ա. ծիսական և ծեսին համապատասխան երգեր, ասույթներ, ասիկներ, օրհնանքներ,
- ✓ սովորում են ավանդական պարեր,

- ✓ պատրաստում են ծիսական պարագաներ,
- ✓ խաղարկում են ծիսական գործողություններ, ծիսական խաղեր,
- ✓ բեմականացնում են երգեր,
- ✓ կատարում են բնագիտական փորձեր,
- ✓ զնում են ուսումնական ճամփորդության,
- ✓ հորինում են հանելուկներ, հեքիաթներ, գովք, օրհնանք,
- ✓ կազմում են մաթեմատիկական խնդիրներ,
- ✓ գրում են նամակներ, բարեմաղթանքներ, վերապատմում, փոխադրում են իրենց տպավորությունները:

Սովորողը, քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, լիիրավ մասնակցությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով ու փոխանցելով, յուրացնում է ծեսը:
Ի՞նչ խնդիրներ են լուծվում.

- ✓ նյութի յուրացում (լեզուն, մտածողության գեղարվեստական այլ արտահայտչամիջոցներ),
- ✓ գիտելիքների, կարողությունների, դրսևորում և կիրառում
- ✓ գեղարվեստական խոսքի մշակում,
- ✓ տարբեր կարողությունների դրսևորում, հղկում, մի շարք հմտությունների ձեռքբերում, մշակում (լեզվական, թատերական),
- ✓ գրական - գեղարվեստական ճաշակի զարգացում,
- ✓ ինքնադրսևորում, ձերբազատում բարդույթներից:

Այս աշխատանքները նպաստում են.

- ✓ երեխայի բառապաշարի հարստացմանը,
- ✓ մտածողության ձևավորմանը,
- ✓ ստեղծագործական երևակայության զարգացմանը,
- ✓ ինքնուրույն աշխատելու ունակության ձևավորմանը,
- ✓ բավարարվում է նրա ինքնահաստատման – ինքնադրսևորման պահանջը,
- ✓ ձեռք է բերվում խմբով աշխատելու, ինքնակազմակերպման հմտություններ,
- ✓ զարգանում է գեղարվեստական ճաշակը (նկարչություն, ձեռարվեստ, երաժշտություն և այլն),
- ✓ ուսումնական մի շարք խնդիրներ են լուծում,
- ✓ հնարավորություն են տալիս գնահատելու և յուրացնելու ազգային արժեքները, ավելի մոտիկից ճանաչելու իրենց ուսուցիչներին, տատիկներին, պապիկներին, ծնողներին, հարազատներին:

Սովորողը կիմանա

- ✓ ազգային ծեսերը,
- ✓ ազգային սովորույթները,
- ✓ ազգային ավանդական պարերը,
- ✓ հայկական ժողովրդական և ծիսական երգերը,
- ✓ ծիսական կերպարները,
- ✓ ժողովրդական, մանկական, ծիսական խաղերը,
- ✓ ծիսական կերակրատեսակները,
- ✓ ծիսական պարագաները:

Սովորողը կկարողանա

- ✓ պարել ազգային ավանդական պարեր,
- ✓ երգել հայկական ժողովրդական և ծիսական երգեր,
- ✓ պատրաստել ծիսական պարագաներ,
- ✓ խաղալ ժողովրդական, մանկական, ծիսական խաղեր,
- ✓ պատրաստել ազգային ծիսական կերակրատեսակներ,
- ✓ համացանցից, այլ աղբյուրներից ծեսին վերաբերվող նյութեր գտնել:

Սովորողը կլինի

- ✓ Ծեսը իմացող ակտիվ մասնակից, փոխանցող, տարածող:

Ծեսն այն միջավայրն է, որտեղ սովորողները ծեսի նախապատրաստական և իրականացման ընթացքում կիրառում են իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները:

Միջառարկայական կապը ծեսի նախապատրաստական շրջանում և իրագործելիս

Երաժշտություն – գիտեն և կարողանում են կատարել ծիսական և այլ հայկական ժողովրդական երգեր:
Պար - գիտեն և կարողանում են կատարել ծիսական և այլ հայկական ավանդական պարեր:
Մայրենի - գիտեն ծեսը, ծիսական ավանդություններ և զրույցներ, ասույթներ, առած-ասացվածքներ, բանաստեղծություններ, կարողանում են խաղարկել ծիսական

գործողություններ, կարողանում են պատմել իրենց կատարածը, գեղարվեստորեն ներկայացնել, ինքնուրույն խաղարկել ստեղծագործական մոտեցում պահանջող ծիսական գործողություններ (օրինակ՝ Բարեկենդանի ծեսին):
Մարմնակրթություն **-** գիտեն և կարողանում են խաղալ ժողովրդական, մանկական, ծիսական խաղեր:
Բնագիտություն - կարողանում են պատրաստել ծիսական բուսական պարագաներ (օրինակ՝ զատկական ածիկ), գիտեն այն բույսերը, որոնք օգտագործվում են ծեսերին և ունեն դրանց մասին, այդ տարիքին համապատասխան, գիտելիքներ:
Զեռարվեստ, կերպարվեստ - պատրաստել ծիսական պարագաներ, այդ թվում՝ հանդերձանք, կատարել նյութի ընտրություն:
Խոհանոց - պատրաստել ազգային ծիսական և այլ կերակրատեսակներ:
Մաթեմատիկա - կարողանում են հաշվել կերակրի համար նախատեսված մթերքը, պարագաներ պատրաստելու համար՝ չափել նյութը, հաշվել գնումները (մետր, սանտիմետր և այլն, կիլոգրամ, գրամ և այլն, դրամ):

Նախագծերի գլխավոր թեման. «Ծեսերին՝ նոր կյանք».

Ազգային ծիսական նյութերի փաթեթ
«Ամանորյա և Սուրբ Ծննդյան երգեր, պարերգեր» նախագիծը Հիմնական դպրոցում
«Անձրևաբեր ծես» նախագիծ
«Անձրևաբեր ծես» նախագիծը կրտսեր դպրոցում - Դպիր 97
«Համբարձման ծես» նախագիծ
«Սուրբ Ծննդյան ավետիսներ, ամանորյա խաղեր» նախագիծ
Ծեսերի, ծիսական գործողությունների իրականացում
«Սուրբ Ծննդյան «Ավետիս»-ներ, ամանորյա խաղեր» նախագիծ
«Բարեկենդանի ծեսը կրտսեր դպրոցում» նախագիծ
«Հարության ծեսը «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում» նախագիծ
Համբարձման ծեսը «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում նախագիծ
«Վարդավառը «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում» նախագիծ
«Անձրևաբեր և անձրևախափան ծեսեր» նախագիծ

5. **Իրականացվող ընդհանուր և սովորողի ընտրությամբ ուսումնական նախագծերին ներկայացվող պահանջներ**

Նախագծի կառուցվածքը

1. Թեման

2. Նպատակը
3. Սովորողների տարիքային խումբը
4. Ընթացքը
5. Աշխատանքների ծավալը և ժամանակացույցը
6. Աշխատանքների ուղղությունները
7. Արդյունքները
   Սովորողը կիմանա
   Սովորողը կկարողանա
   Սովորողը կլինի
8. Սովորողների և դասավանդողների ստացած արդյունքների ներկայացումը կայքում, Դպիրում, Լուսաստղում

Երաժշտության դասընթացի առարկայական ծրագրեր. 1-11-րդ դասարաններ

Երաժշտությունը Կրտսեր դպրոցում
Երաժշտությունը Միջին դպրոցում
Երաժշտությունը Ավագ դպրոցում
Երաժշտությունը Քոլեջի 1-ին կուրսում՝ հիմնական կրթության հիմքով
Երաժշտության ընտրությամբ գործունեությունը 1-4-րդ դասարաններում
«Սեբաստացիներ» մանկական երգչախումբը՝ երաժշտական ունակությունների զարգացման միջավայր

6. Ուսումնական նախագծերի մշակման և իրականացման մեթոդական նկարագրություն

Ուսումնական նախագծերի օրինակներ.

«Կոմիտաս» նախագիծ
«Հակաբացիլ Կոմիտաս» նախագիծ
Ազգային ծեսերին, խաղերին՝ նոր կյանք , (Դպիր 81)
Մեդիաուրբաթը՝ որպես համերգ , Դպիր 77)
«Անձրևաբեր և անձրևախափան ծեսեր» նախագիծ , Դպիր 97
«Խաղը ծիսական միջավայրում» նախագիծ

Ուսումնական ծրագիրն արտացոլում է կոնկրետ բովանդակությամբ դասընթացի կամ առարկայի ամբողջական պատկերը՝ խնդիրներով, նպատակներով, ակնկալիքներով, արդյունքի որոշակի արտացոլումով:

Ուսումնական նախագիծը կարող է հանդես գալ և որպես առանձին բաղադրիչ և որպես ուսումնական ծրագրի բաղադրիչ:

Ուսումնական նախագծի շրջանակներն ավելի նեղ են և հստակ: Նույնը կարելի է ասել նաև ժամկետային առումով: Ավելի որոշակի է նաև ակնկալվող արդյունքը, մասնակիցները, իրականացման շրջանակները:
Ուսումնական նախագծի շրջանակներում կարող են առաջանալ նաև ենթանախագծեր:

1. Նախագծային աշխատանքի արդյունքում սովորողները միասին ստեղծում են շոշափելի արդյունք:
2. Այս կամ այն նախագծի իրականացման ընթացքում ստեղծում են ուսումնական նյութեր, տեսանյութեր, որոնք աստիճանաբար ձևավորում են ուսումնական մեդիափաթեթներ՝ վերածվելով ռեսուրսների:
3. Մեդիափաթեթները հրապարակվում են բլոգում, որպեսզի հասանելի լինի բոլորին:
4. Արդեն պատրաստի մեդիափաթեթները օգտագործվում են մյուս տարիներին ևս՝ համալրվելով ու լրացվելով նորանոր նյութերով:
5. Ուսումնական նախագծերի մշակման համար շատ կարևոր է տվյալ առարկան դասավանդողների համագործակցված աշխա տանքը: Դասավանդողներից յուրաքանչյուրը կարող է մշակել իր նախագիծը, բայց կան նաև ընդհանուր նախագծեր, որոնց իրականացումը հարկավոր է անպայման համաձայնեցված կազմակերպել ինչպես տվյալ առարկան, այնպես էլ այլ առարկաներ դասավանդողների հետ:

- ✓ **«Կոմիտաս» նախագծի մշակման և իրականացման մեթոդական նկարագրություն**

Թեմայի ընտրությունը

Ինչու՞ Կոմիտաս, ինչո՞վ է առանձնանում և կարևորվում նրա երաժշտական գործունեությունը, ո՞րն է այն առանձնահատուկ դերը, որի շնորհիվ նա դարձել է հայ ազգի համար երաժշտական ազգային գիտակցության, ճաշակի ձևավորման ուղեցույց:

Մասնակիցների, սովորողների տարիքային խումբը.

Կոմիտասի երաժշտական ժառանգությունը ժողովրդական երաժտարվեստն է, ուրեմն տարիքային խումբը, ինչպես ժողովուրդը, պետք է լինի նախակրթարանից մինչև դասավանդող:

Աշխատանքների ծավալը և ժամանակացույցը.

Կան արժեքներ, որոնք չեն կարող ժամանակահատվածում տեղավորվել, այլ բան է, երբ ուղղակի որոշվում է, թե որ ժամանակահատվածում պետք է ներկայացնել արդյունքները: Ժամանակացույցը նշվեց հիմնականում այդ նպատակով, իսկ աշխատանքն անընդհատ է:
Աշխատանքի ծավալը ներկայացվեց նյութի ընթացքի և նյութի բաշխման բաժիններում: Կոմիտասի ժառանգությունն այնքան մեծ է, որ աշխատանքի ծավալը որոշելու համար որոշվեց.

- ✓ ընտրել այն նյութերը, որոնք կարող են ներկայացվել նախակրթարանում և դպրոցում
- ✓ յուրաքանչյուր տարիքային խմբի համար առանձնացնել մատուցվող նյութը:

Նյութերը ծավալուն էին, դրա համար դասավանդողը կարող էր ուսուցանել այնքան երգ, որքան կկարողանային սովորել և կատարել նախակրթարանի սաները, սովորողները:

Աշխատանքների ընթացքը, նպատակը, խնդիրներն ու արդյունքները

Նախագծի նպատակը

- ✓ սովորողների երաժշտական կրթում,
- ✓ նրանց մոտ երաժշտական մշակույթի ձևավորում:

Խնդիրները

- ✓ սովորողներին ներկայացնել բարձրաճաշակ երաժշտություն, որը կնպաստի նրանց գեղագիտական ճաշակի ձևավորմանը,
- ✓ երաժշտության միջոցով հաղորդակից դարձնել ազգի մշակույթին, նպաստել դրա յուրացմանը,
- ✓ երաժշտական մտածողության ձևավորում և զարգացում,
- ✓ հոգևոր զարգացում,
- ✓ ազգային, հոգևոր նյութի յուրացում,
- ✓ գեղարվեստական մտածողության ձևավորում և զարգացում,
- ✓ ընդհանուր զարգացման ապահովում,

- ✓ ստեղծագործական երևակայության զարգացում,
- ✓ երգի ուսուցման և կատարման միջոցով
  - երաժշտական ունակությունների զարգացում,
  - երգի կատարողական գրագիտության և կուլտուրայի մշակում,
  - երգի կերպարային զգացողություն,
  - ճաշակի ձևավորում:

Երաժշտության նախագծային աշխատանքում առկա են գործունեության այն հիմնական ձևերը, որոնք կան դասապրոցեսում՝

- ✓ երգեցողություն
- ✓ պար
- ✓ ունկնդրում
- ✓ երաժշտա – տեսական գիտելիքներ
- ✓ ռիթմիկ և երաժշտա-ռիթմիկ վարժություններ, երաժշտական և այլ խաղեր
- ✓ նվագակցություն «բնական», հարվածային և շրխկան նվագարաններով
- ✓ հետազոտական աշխատանք
- ✓ ստեղծագործական աշխատանք
- ✓ հնչյունային, բառային ռիթմիկա

Գործունեության յուրաքանչյուր ձև բնականաբար կիրառվում է:

Արդյունքները

Սովորողը իմացավ

- ✓ Կոմիտասի ստեղծած, գրի առած և մշակած հայկական ժողովրդական երգերը,
- ✓ Կոմիտասի ստեղծագործությունները՝ վոկալ, դաշնամուրի համար գրված, խմբերգերը,
- ✓ Կոմիտասի անվան լարային քառյակի կատարմամբ Կոմիտասի գրի առած և հորինած ստեղծագործությունները:

Սովորողը եղավ

- ✓ Կոմիտասի երգերը իմացող, փոխանցող, տարածող:

Սովորողը կարողացավ

- երգել մաքուր ինտոնացիայով, վոկալ ճիշտ շնչառությամբ,

- համացանցից (www.komitas.am, www.youtube.com , այլ կայքեր), և այլ աղբյուրներից ինքնուրույն գտավ անհրաժեշտ նյութեր,
- ինքնուրույն հետազոտել և ստեղծել համապատասխան նյութեր Կոմիտասի մասին:

Սովորողների և դասավանդողների ստացած արդյունքների ներկայացումը կայքում, բլոգում, ձայնադարանում

Կոմիտասյան օրերին, կրթահամալիրի «Սեբաստացիներ» ուսոցչական երգչախումբը, տարբեր դպրոցների տարբեր խմբեր, որոնք ուսումնական նախագծի շրջանակներում նախապես պատրաստվել են, ելույթներով հանդես եկան Հայաստանի տարբեր մարզերում, մասնավորապես՝ մշակութային կենտրոններում և եկեղեցիներում: Սա իրենից ներկայացրեց յուրահատուկ կենսամշակութային արշավների շարք: Այն հնարավորություն տվեց տարածել Կոմիտաս արժեքը, ինչը դրված էր այս նախագծի հիմքում: Այն ընձեռեց նաև հնարավորություն այս համատեքստում էլ ավելի ճանաչելի դարձնել կրթահամալիրը և իրականացվող նախագծերն ու ծրագրերը:

Ուսումնական պարապմունքների ձևերը և դրանց կազմակերպման մեթոդական նկարագրություն

Երաժշտության առարկայական մեթոդական մշակում. Կրտսեր դպրոց

Երաժշտության առարկայական մեթոդական մշակում. Միջին դպրոց

7. Ուսուցման անհատականացման մեթոդական նկարագրություն

- **սովորողի ինքնուրույն յուրացման նյութը (ընթերցվող ուսումնական գրականություն). սովորողի ինքնակրթության (մասնագիտական ընթերցանության) կազմակերպման մեթոդական նկարագրություն.**
- **հատուկ ուսուցում. այդ թվում՝ սովորողների հետազոտական աշխատանք. (հնարավոր հետազոտական աշխատանքների թեմաներ՝ իրենց անոտացիաներով, որոնցից սովորողները կարող են խմբով կամ անհատապես ընտրել իրենց ընտրությամբ, դրանց կատարման ժամկետները) և հատուկ կարիքներով սովորողների աշխատանք**
- **սովորողների հետազոտական աշխատանքին ներկայացվող պահանջներ**

8. **Ծրագրով որոշված ստեղծագործական հավաքների, համերգների, ցուցահանդեսների, ներկայացումների մասնակցության կամ կազմակերպման մեթոդական նկարագրություն**

Համերգների կազմակերպում և մասնակցություն

Ծրագրով որոշված համերգի մասնակիցները նախօրոք տեղեկացված են, պատրաստվում են: Կազմակերպիչը գրանցում է կատարվող նյութերը և կազմում համերգային ծրագիր: Մեկ կամ երկու օր առաջ համերգային դահլիճում նշանակվում է հարմար ժամ՝ փորձելու կատարվող նյութերը: Յուրաքանչյուր մասնակից պետք է ունենա նշանակված ժամանակ, որի ընթացքում հասցնում է կատարել ստեղծագործությունը (ստեղծագործությունները): Ո՞րն է փորձի նպատակը: Կատարողները նախ որոշում են՝ բեմի կամ ելույթի համար նախատեսված տեղի որ կողմում են կանգնում, որպեսզի կարվող ստեղծագործությունը լիարժեք հնչի, եթե կա գործիքային նվագակցություն, ինչ դիրքով են կանգնելու, իրարից ինչ հեռավորության վրա, լսու՞մ են արդյոք իրար: Եթե մենակատար է, շարժման ժամանակ ձայնի հնչողությունը չի՞ փոփոխվում: Եթե միկրոֆոն կա՝ մաքու՞ր է ձայնարտաբերումը: Ստուգվում է տեխնիկական սպասարկումը, որոշվում է լուսավորության հարցը: Համերգը վարողը կամ վարողները գիտեն իրենց անելիքը: Նրանք պետք է կարողանան անսպասելի իրավիճակից դուրս գալ՝ ելույթի մասնակիցը կամ մասնակիցները բեմ դուրս գալու դեռ պատրաստ չեն կամ ելույթը չի հաջողվում տվյալ պահին կամ կա տեխնիկական որևէ խնդիր, և այլն:
Համերգը սկսելուց առաջ կազմակերպիչը համոզվում է, որ համերգային համարներ կատարողը (կատարողները) տեղում են: Եթե կան բացականեր կամ ուշացողներ, որի մասին նա տեղյակ է, զգուշացնում է համերգավարին (համերգավարներին): Ապա հերթով կատարվում են բոլոր համարները:

9. **Ստուգման և կիսամյակային, տարեկան գնահատման կարգը. սովորողի ուսումնական բլոգի (բլոգի համապատասխան բաժնի) բովանդակությունը, ինքնաստուգման, ստուգողական առաջադրանքների ժամանակացույցը և բովանդակությունը**
10. **Այլ**

Միջին և Ավագ դպրոցի սովորողը

- ✓ ուսումնական նյութեր պատրաստելու նպատակով օգտվում է համացանցի տարբեր աղբյուրներից,

- ✓ ինքնուրույն կատարում է ձայնագրություն, տեսագրություն,
- ✓ ստեղծում է ուսումնական նյութեր (երգերի կարաոկեներ, ուսումնական, ճանաչողական ֆիլմեր, պրեզենտացիաներ), որոնք ստուգում է երաժշտության դասավանդողը,
- ✓ ստուգված նյութերը տեղադրում է ուսումնական, սոցիալական տարբեր կայքերում, տարածում դրանք, օգտվում դասավանդողների, դասընկերների ստեղծած ուսումնական նյութերից:

Համացանցը սովորողի կողմից օգտագործվում է ինչպես տեղեկատվական, ճանաչողական, այնպես էլ՝ ուսումնական տարածք:

Ուսումնական տարածք կարող է լինել

- ✓ ուսումնական հաստատության կայքը,
- ✓ դասավանդողի, սովորողի, դասարանի, ծնողի բլոգը, սոցիալական ցանցերը

Նշված տարածքներում տեղադրվում են բոլոր այն ստեղծված նյութերը, որոնք օգտագործում են թե՛ սովորողները, թե՛ դասավանդողները, թե՛ ծնողները, թե՛ այլ անձիք: Չափազանց կարևոր է կայքերի և բլոգների բովանդակության հստակեցումը՝ որպես ուսումնական միջավայր:

Ուսումնական նյութեր, ֆիլմեր, պրեզենտացիաներ պատրաստելու նպատակով երաժշտության դասավանդողին և սովորողին անհրաժեշտ են.

- ✓ երգարաններ,
- ✓ նոտաներ,
- ✓ մասնագիտական ձեռնարկներ,
- ✓ մասնագիտական գրականություն,
- ✓ էլեկտրոնային գրականություն,
- ✓ ձայնադարան (ձայնա-տեսասկավառակներ),
- ✓ էլեկտրոնային ձայնադարան: